Մասնաժողովս՝ ինչպէս լսեց Սրբազան Պատրիարքը, նոյնպէս Պէկեան էֆէնտի ձեռքը գտնուած Հայկական խնդրոյ վերաբերեալ գրութիւններն ալ ( ըստ իւր յայտարարութեան յատենի Պատկառելի Ժողովոյդ ) տեսնել պատշաճ գատեց, և հրաւիրեց զինքը ներկայացնել զանանք Մասնաժողովոյս : որպէս զի եթէ անոնց մէջ կտակածի կամ շիթութեան տեղի տուող բան մը տեսնէ, որ քննութեան արժանի ըլլայ, կարենայ Պատկառելի Ժողովիդ բերել և ներկայացնել, և ըստ սյնմ քննութեան եղանակին ու ժամանակին վրայ կործիք յայտնել : սակայն Պէկեան էֆէնտի չհաճեցաւ այդ թղթերն ներկայացնել, այնպիսի առարկութեամբ, որով Մասնաժողովոյս պաշտօնը սխալ մեկնած էր : ուստի Մասնաժողովս չուզելով իւր հրաւերը երկրորդել, պատշաճ գատեց Պատկառելի Ժողովոյդ տնօրէնութեանը յանձնել :

Արդ՝ Մասնաժողովս կեդրակացնէ իւր տեղեկագիրը թէ, Սրբազան Պատ-

րիարք Հօր՝ Հայկական խնդրոյ վերաբերեալ բոլոր գրութիւններն տեսնելով և քննելով, բնաւ կասկածի կէտ մը դըտած չէ անոնց մէջ — ուստի Ամեն Սրբազան Պատրիարքը Պատկառելի Ժողովոյդ վստահութեանն և շնորհակալութեանն արժանի է, Հայկական խնդրոյ մասին իւր բոլոր գործողութեանց համար, զորս իւր պատասխանագրովք ամփոփած և բերած է Պատկառելի Ժողովոյդ :

22 Սեպտեմբեր 1878  
Մեմբ խորին յարգանք  
Անդամք նախաքննիչ Մասնաժողովոյ  
Ատենապետ  
Կարգեալ Եղիշեան Սէրճէեան  
Տեղեկագրեր և Ատենադպիր  
Ներսէս վարչարար Աւուշեան  
Ա. Մ. Վ. Ուրբէեան Բարսէղ Հալաբեան  
Գ. Պարսէան Սէրճէեան Մանուկեան

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Նախ՝ սոյն տեղեկագրին վրայ պէտք է խօսինք, որչեզեք համար թէ արդեօք Օրակարգն անցնելու է չէ նկ նախազգուշով մերժելու է :

ՊԱՐՁԱՐՈՍԵԱՆ Բ. ԷՖ. — Եթէ ստիպողականութիւն արուի, կանոնը կըսէ թէ տեղեկագրին ներկայացեալ օրն ալ անմիջապէս կրնայ վիճարանութեան ենթարկուիլ :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Տեղեկագիրը թերի է, քանի որ Պէկեան էՖիլեոսի հրաւիրուեր է իր քով թղթերը տանելու Յանձնախմբին և չէ տարեր : Ժողովը սկսեք է ծանուցանել Պէկեան էՖիլեոսին՝ որ ստանի, ապա թէ ոչ տեղեկագիրը պակասաւոր է :

Պէկեան Թ. ԷՖ. — Թէ և Օրակարգին մէջ է արդէն այս խնդիրը և կրնայ անոր վրայ խօսուիլ, բայց ըստ որում Փառալուստեան



էֆէնտի գիտել առաւ թէ իբր նոր ներկայացեալ խնդիր Օրակարգն անցնելէ առաջ տեղեկագրին թերի մասը քացնել հարկ է, ուստի թէ որ ժողովը կհասնի, այդ թերի մասին վրայ պիտի խօսիմ. այսինքն թէ Յանձնախմբին իմ երթալս հարկ էր թէ ոչ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Պէկեան էֆէնտին իրաւունք ունի փաստարանել թէ Յանձնախմբին չնեղակայանալուն իրաւունք ունէ՞ր թէ ոչ:

Պէկեան Է. — Տեսարք երեսփոխանք. խնդիր մը կար Հայկական անունով. Սրբազան Պատրիարքի համար բերաւ առ համարառու մարմինն որ է երեսփոխանութիւնն. այս վերջնայն իրաւունքն էր իր գիտողութիւններն ընել. ես յեաինս երեսփոխանաց գիտողութիւն ըրի. իմ գիտողութիւնս կրնայ ուղիւ ալ ըլլալ, սխալ ալ ըլլալ. եթէ իրաւունք չունէինք իբր երեսփոխան գիտողութիւն ընելու և կարծիք յայտնելու, ինչո՞ւ բերին մեզի այս համարառութիւնը: Եթէ Յանձնաժողովին ատենը տանկ պէտք էր, բնաւ հոս բերուելու չէր. քանի որ հոս բերուեցաւ, ըսել է որ մեր քննադատութեանն ենթարկել ուզուեցաւ. այս սեռութեամբ իմ գիտողութիւններս վերադասած եմ սոյն երեսփոխանական ատենին մէջ ընել և իմ կարծիքներս պաշտպանել ձեռքս եղած վաւերական գրութիւններով: Իմ ընելիք խօսքերս ոչ ազգային շահուց կղպչին և ոչ քաղաքականութեան: Գիտեցէք երեսփոխան էֆէնտիներ, որ այս կերպով մեծ սկզբունք մը ոտքի տակ կերթայ: Ազգ. ժողովոց համարառութեան իրաւունքը կը դո՞ստի: Ուստի կխնդրեմ թող տալ ինձ, համարառութեան իրաւունքս ի գործ դնել յայտմ մասին, սոյն համարառութեան մէջ: Արդէն առաջին օրէն սկսած էի իմ գիտողութիւններս ընել հոս, կուզեմ որ դարձեալ հոս շարունակեմ. եթէ սխալ են իմ կարծիքներս, և դատաւարտութիւն հարկ է, ևս կընդունիմ այդ դատաւար-

տութիւնը. միայն թէ քանի որ խնդիրը հոս ներկայացաւ, հոս պէտք է լինի նաև մեր քննադատութիւնը: Եթէ վաւերապէս էր իրենդրը և հոս յուղուին անպատեհ, պէտք չէր բերել, քանի որ հոս բերուեցաւ, ես ալ հոս կվերապահեմ իմ ըսելիքներս, այլ է որ ժողովը չուզէ լսել:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Պէկեան էֆէնտի խօսքերուն մէջ կէտ մը կայ՝ որ պարզ օրինական ձևի կվերաբերի. ըստ իմ կարծեաց, Ազգ. երեսփոխանական ժողովոց և ամեն ժողովոց գործառնութեանց ձևերը յեղաշրջել ուղեց: Նախ պէտք է գիտնալ թէ իրենդիրը համարառութիւն չէ: Ենթադրելով իսկ թէ համարառու մարմին մը համար բերած ըլլար հոս, Պէկեան էֆէնտի շուրջը ըմբռնել թէ ժողովէս ընտրեալ յանձնախմբի մ'առջև գիտողութիւնը կրնան լսուիլ և քննութիւն ըլլալ: Պէկեան էֆէնտի կըսէ թէ իր քննադատութիւնները հոս միայն կուզէ ընել. և չէ թէ ասկէ դուրս, քայց ժողովուարաց է. ուզէ նէ ինք կըրէ և ուզէ նէ իր մասնախմբին կը յղէ խնդիրը պատրաստելու համար: Կտեսնենք որ Նախաքննիչ յանձնախմբը Ս. Նախադահէն պէտք է զած տեղեկութիւններն ստանալէ ետև, տեսնելով որ Հայկական խնդրոց մասին միմիայն Պէկեան էֆէնտի ընդգիմարանութիւնը պատճառաւոր է նախաքննութեան, բնականաբար անհրաժեշտ համարեր է անոր բացատրութիւններն ալ լսել և քովն եղած թղթերը տեսնել, սո անց օրոյ իւր պաշտօնը թերի կը մնար: Իսկ Պէկեան էֆէնտի պատասխաներ է թէ ինք պարտաւոր չէ Յանձնախմբին տեղեկութիւն տալու: Միևնոյն պատասխանը Պէկեան էֆէնտի հիմա հոս ալ հանդիսապէս յայտնեց՝ երբ Փափաղեան էֆէնտի Յանձնախմբին տեղեկագրոյն թերի ըլլալը մէջ բերաւ. Պէկեան էֆէնտի կտխալի այս կէտին մէջ. քանզի ժողովն ազատ է որ և է խնդիր ինք ըսել կամ իր գիտաններէն մէկուն և կամ յանձնախմբի մը յղել: Այսուհանդերձ Պէկեան էֆէնտի խօսքերէն այնպէս կըմբռնեմ թէ

ժողովն որոշած ըլլալուն համար կխորշի Յանձնախմբին երթալն, և եթէ ժողովն որոշէ, չպիտի ընդգիմանայ իր գիտողութիւնները Յանձնախմբին հաղորդելու:

Պէկեան Է. — Ներկեցէ՛ք ատենապետ էֆէնտի, իմ խօսքս սխալ ըմբռնած էք. ես չըսի թէ Ազգային ժողովն եթէ որոշէ իմ երթալս Յանձնախմբին, կընդունիմ. ընդհակառակն ես պայման դրի այս ժողովէն դուրս բացատրութիւն չտալու: Ես չեմ զըլանար, ուրանար Ազգային ժողովոց յանձնախմբի կազմելու իրաւունքը. զայդ անդիտանալու չտի տղէտ չեմ: Ես ըսի թէ ժողովին իրաւունքն է Հայկական խնդրոյն վրայ համար առնուլ Ս. Պատրիարքէն, և այս համարառութիւնն արդէն ներկայացած ըլլալով ժողովոյս, ես ալ իբրև սոյն համարառու մարմնոյն անդամներէն մին իրաւունք ունէի իմ կարծիքս հոս յայտնել ժողովը կրնար զիս լսիլ ետև իմ թղթերս զրկել ուր որ պատշաճ դատէ. իսկ ես պարտականութիւն չունիմ Յանձնախմբին երթալու, ոչ ալ իմ քովի թղթերս տանելու. վասն զի ոչ ամբաստանող եմ և ոչ ամբաստանեալ այս խնդրոյն մէջ: Ես Յանձնախմբին կազմութիւնը կամ գոյութիւնը չէ որ կը ժխտեմ. ժողովը կրնայ կազմել և պիտի կազմէ անուշտ յանձնախմբ մը՝ երբ ես խօսիմ և լինցնեմ: Ես ներկայ Յանձնախմբին կատարած պաշտօնն է որ կժխտեմ և իրաւամբ. վասն զի իրեն արուած պաշտօնին հակառակ վարուած է: Ահաասիկ է. նստի ատենագրութեան մէջ՝ ատենապետ փաշան սասկէս բացատրած է այդ Յանձնախմբին պաշտօնը.

(— ԿՐԴՅ ԳԵՒԷԼԵ) —

« Յանձնախմբ մը պիտի դնենք՝ որ երթայ Սրբազանէն գործը հասկընայ և տեղեկագիր մը բերէ մեզ թէ սոյն խնդրոյն վրայ քննութիւն և հրատարակական վիճարանութիւն ընելու ժամանակն եկած է թէ չէ, և եթէ եկած է, ի՞նչ կերպով զայն ընել պատշաճ կըստէք »:

Ահա այսքան է Յանձնախմբին պաշտօնը. նոյն օր ատենապետ փաշան ալ ճանչցաւ իմ քննադատութեան իրաւունքս. սակայն օրը չէ ըսաւ և կզրակացուց որ Յանձնախմբին երթայ Սրբազանին հետ բանակցելով՝ օրը և տեղը հասկընայ և տեղեկութիւն բերէ հոս: Այս ատենութեամբ պատրաստ եմ իմ քննադատութիւնս ընելու և իմ քովի վաւերական թղթերս ներկայացընելու եթէ ժողովն որոշէ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ուրեմն կընդունիք որ ժողովը պէտք է որոշէ թէ արդեօք հոս չէ նէ Յանձնաժողովին ներկայացնելու էք ձեր քովի թղթերը:

Պէկեան Է. — Բայց ես ազատ եմ ընդունիլ կամ ոչ ժողովին ընելիք որոշումը:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Խնդիրը չճաղաղելու համար մինակ օրինական կէտերու վրայ պիտի խօսիմ: Ե. նստին ես ներկայ չի. քայց ատենագրութիւնը ձեռքս է, որ արդէն վաւերացած ըլլալով իրաւունք ունիմ զայն իբր հեղինակութիւն նկատել:

Եթէ խնդիրը պաշտ արեամբ նկատենք, կտեսնենք որ 12 երեսփոխանաց կողմէ հարցում մ'ուղղուեր է Ս. Պատրիարքին Հայկական խնդրոյն վրայ, և Սրբազանն ալ պատասխան մը բերեր է:

Պէկեան Է. — (Ընդհանրապէս) Համարառութիւն բերեր է ըսէք.

ՓԱՓԱՋԵԱՆ ԷՖ. — (Շարունակելով) Շատ լաւ, թող համարառութիւն բերած ըլլայ ո գիւտներ նախաձեռնով մը Ս. Պատրիարք Հօր համար վաաստեմեան քուէ առաջարկեր է. ըստ կանոնի իրաւունք է նախաձեռն առաջարկել միջազէպ մը գոցելու համար: Պէկեան էֆէնտի խնդիրը նախաձեռնով ատենանէն դուրս հանել շտալու համար թողտուութիւն ուզեր է խօսելու. և այնպիսի գայթակղեցուցիչ յայտարարութիւններ ըրեր է, որ ժողովն ստիպուեր է կանգ առնուլ, նա-

խաղճոով տալիք վստահութեան քուէն մէկ կողմ դնել . և ըստ որում խնդիրն մասնակ և Պէկեան էֆէնտի յայտարարութիւնները ծանրակշիռ էին , ուստի ժողովը մոխանակ Պէկեան էֆէնտի ծոցէն հանած տօքիւմաններն ու գրութիւնները իր ատեանին մէջ լսելու և ասլա նախաքննութեան յղելու , որոշեր է Նախաքննիչ Յանձնախումբ մը կարգել և անոր յղել խնդիրը . որպէս զի պէտք եղած խուզարկութիւններն ընէ , և ըստ այնմ հրապարակային քննութեան ու վիճարանութեան հարկն ու եղանակը տեղեկագրէ :

(+ա) է քննարաններէ քննարանները

Մտիկ ըրէք . քիչ մ'ալ մեզ մտիկ ըրէք : Հիմա ինչ կրտէ Նախաքննիչ յանձնախումբը . կրտէ թէ Սրբազան Հօր բոլոր թղթերը նախեցայ , պէտք եղած տեղեկութիւններն ըստացայ և կասկածելու բնաբան մը չգտայ . ուստի հարկ եղաւ որ տեսնեմ Պէկեան էֆէնտի թղթերն ալ այն տօքիւմաններն ու գրութիւնները որոնցմով պիտի հաստատէ մեքենայութիւններն , խարէութիւններն ու կեղծիքները . . .

Այս պահուս Ատենապետ և Ատենաղբալիք էֆէնտիներուն մէջ ծագած թիւրխացութեան մը պատճառաւ ժողովը քանի մը վայրկեան ազմկալից կերպարանք առաւ , և սոյն միջոցին Երեսօրհանաց ոմանց մէջ փոխանակուած խօսքերուն վրայ Պէկեան էֆէնտի հետևեալ խօսքերուն արձանագրուիլը պահանջեց :

« Հոս պիտի խօսիմ , և իմ քննադատութիւններս հոս պիտի ընեմ : Խարէութիւններ , կեղծիքներ պիտի յայտնեմ : Արձանագրեցէք այս բաներս » :

(Երեսօրհանաց կողմէն քննարան և քննարաններէն յայտնեց )

ՍՐԲԱԶԱՆ ՆԱԽԱԳԱՆ — Այս Հայկական խնդիրն ինչպէս գիտէք , իմ պատասխանատուութեանս տակ ինձի յանձնուած էր արդէն . ևս եկայ ձեր մէկ հարցմանը պատասխան տալու . դուք ևս յանձնախումբ

մը կարգեցիք , որ երկան բարակ ինչ տեղեկութիւններ ուղեց և ստացաւ :

Դուք ինչո՞ւ իրար կանցնիք , ևս աւերաստանուած եմ իրր դաւաճան և իրր խարերայ . եթէ ստոյգ է այս , հոս նստելու արժանի չեմ :

Կհրաւիրեմ Պէկեան էֆէնտին որ կարգայ ձեռքի թղթերը . տեսնե՞ք ի՞նչ է դաւաճանութիւն ըսուածը :

Այս միջոցին Պէկեան էֆէնտի ոտք ելնելով՝ բեմն երթալէ առաջ Սրբազան Հօր ձեռքը համարեւել ուղեց . բայց Նորին Սրբազնութիւնը՝ դաւաճանին յետքէն համարեւել ըսելով թոյլ չտուաւ , և ստիպեց որ կարգայ ձեռքի թղթերը : Փափազեան էֆէնտի որ արդէն բեմը կը գտնուէր , դեռ խօսքս լմնցուցած չեմ և միայն Ատենապետը կըրնայ զիս բեմէն վար առնել ըսելով՝ բեմէն վար չիջաւ , և Պէկեան էֆէնտի նորէն իր տեղը դարձաւ , շէն շէն զոչնչէր , պոտալով :

Ազմուկը երթալով կծանրանար : Մէկ կողմէ փափազեան էֆէնտի խօսքին շարունակութիւնը լսել ուղղներուն և միւս կողմէ Պէկեան էֆէնտի թղթոց ընթերցումը պահանջողներուն ձայներն իրար խառնուելով , ատենին հանդարտութիւնը պահ մը խանգարեցաւ :

Գիւանին մէջ ծագած թիւրխացութիւնը սոյն միջոցին արդէն պարզուած ըլլալով Ատենապետ էֆէնտին ժողովին կարգապահութեան ղեկն իսկոյն ձեռքն առաւ , և ծանուցանելով որ ատենաբան մը կայ արդէն ի բեմն՝ որ դեռ իր խօսքն աւարտած չէ , և պէտք է որ նախ նա իր խօսքն աւարտէ և յետոյ ուրիշ մ'անոր յաջորդէ եթէ ժողովն որոշէ , հրաւիրեց զփափազեան էֆէնտին շարունակել իր խօսքը :

ՓՅՓԱԶԱՆ Ս. ԷՖ. — Ատենաղբալիք էֆէնտին կրտէ թէ Նախաքննիչ մասնաժողովին սղաշտօնը միայն Ս. Պատրիարքը լսել էր . ասի սխալ է . և այս խնդիրը հիմէն սխալ բռնուած ըլլալուն համար է որ այսչափ ըս-

միտութիւն և գայթակղութիւն տիրեր է : Երբ երեսօրհան մը Սրբազան նախագահին համար առաջարկեալ վստահութեան քուէն ետ թողելու համար կեղծէ այնպիսի դիտարկութիւններ կընէ ծալած թղթեր ցուցնելով , որ պարզապէս ամբաստանութիւն են Սրբազան Նախագահին դէմ , դիւանին պարտաւորութիւնն էր նոյն թղթերն անմիջապէս պահանջել , կարգալ ժողովին և ասլա յղել նախաքննութեան : Բայց կերեւի որ Պէկեան էֆէնտի այնպիսի բուռն կրիւք խօսեր է , որ վերիվայր տասպալեր է ամենուն մտքերը , և հազիւ նախաքննութեան յղելով խնդիրն յետաձգելու տկար փորձ մ'ըրեր են :

Նոյն օրը ժողովին մէջ տիրած յուզման մէկ ազդեցոյցն ալ Նախաքննիչ Մասնաժողովին սղաշտօնին սահմանն է , որ կրտէ թէ՛ Ս. Պատրիարքէն տեղեկանայ , մինչդեռ պէտք էր լսէր , Նախաքննիչ Մասնաժողովը Պէկեան էֆէնտիին թղթերը պէտք է քննէ , և եթէ անոնց մէջ կասկած հաստատող բան գտնէ զիմ Ս. Պատրիարքին և անկէ ստուգէ և ըստ այնմ քննութեան հարկն ու եղանակն տեղեկագրէ :

Արդ ժողովն կարգեալ յանձնախումբն եթէ միայն Սրբազան Հայրը լսէր և չդառնար մեզ ըսէր թէ քննեցի անոր թղթերն ու գործերը և կասկածելի բան մը չգտայ , արդեօք չպիտի ըսէ ինք թէ ինչու Պէկեան էֆէնտին ալ չհարցաքննեցիր ու անոր թղթերն ալ չքննեցիր . որովհետեւ նա է որ մեքենայութիւններ կան տղաղակած է այս ժողովին մէջ և ի հաստատութիւն յայտարարած է թէ ասքիւմաններ ունի ի ձեռին :

Ուստի Յանձնախումբն իմաստութեամբ վարուերէ Պէկեան էֆէնտին ալ լսել ուղեւել , և հրաւեր կարգալով անոր , որ ձեռքի թղթերովը մէկտեղ ներկայանայ իրեն . Պէկեան էֆէնտի այս հրաւերը մերժեց է , պատասխանազրով մը , զոր լրագրաց մէջ տեսած ենք արդէն , որուն մէջ կրտէ Պէկեան էֆէնտի թէ Յանձնախումբին սղաշտօնը չէ զիս հրաւիրել և իմ թղթերս քննել , Յանձնախումբն ալ Պէկեան էֆէնտի այդ յայտարարութիւնը իր տեղեկագրովն այսօր ժողովիս կ'աղարկէ :

և անոր տնօրինութեանը կ'յանձնէ :

Ուրեմն ժողովիս կ'մնայ վճռել թէ Նախաքննիչ Մասնաժողովն կամ իրաւունք ունի Պէկեան էֆէնտի թղթերն ալ տեսնելու և կամ ոչ :

Գիտե՛լ պէտք է թէ Պէկեան էֆէնտի կպնդէ այս ժողովն գուրս մէկու մը ցոյց ընտալ իր քովի թղթերը , և մինչեւ իսկ եթէ ժողովը Յանձնախումբին տանիլ որոշէ ալ , չեմ տանիր կրտէ : Իրաւունք չունէ՞ր առաջին օրը երբ հասայ Եւրոպայէն , և այսպիսի ցաւալի յայտարարութիւն մը տեսայ , առաջարկելով ժողովն ինք իր մէջ դաւաճակ նստով ամեն բան լսելու խնայ . զի գիտեմ հակառակ թէ Պէկեան էֆէնտի կասկածներն ամենքն ալ անտեղի են , և բան մը չունի ձեռքը որ կարենայ իր այդ նողկալի յայտարարութեանց մէկ փոքր կէտն անգամ հաստատել :

Ազկ նկատեցէք , տեարք , թէ Պէկեան էֆէնտի որչափ կ'ճգնի իր գոչը փոխելու , կաշխատի որ ամբաստանող չերեւայ , այլ լսի քննադատ մը . սակայն էս նստին մէջ ըրած ստիպի յայտարարութիւններն քննադատութիւնը են թէ բացարձակ ամբաստանութիւնք . երբ Ազգին վստահութիւնը զըրաւող Պատրիարքի մը գործոցը մէջ մեքենայութիւններ կան կրտէ , և կարգելու որ ժողովն իր վստահութեան քուէն շնորոգէ առանց զինքը լսելու , ասի ամբաստանութիւն չէ , հասլա ինչ է , մանաւանդ երբ պատրաստ եմ բոլոր լսածներս վաւերական գրութիւններով հաստատել , կրտէ , ինքնին կ'աւանդէ թէ ինք ամբաստանող է :

Սակայն Պէկեան էֆէնտի ինք ալ յետոյ կզգայ իր այս ծանր վիճակը , և հետոյհետէ ատենագրութիւնը որբաղ բերու առթիւ փախտախի ճամբայ կորոնէ , ինչպէս որ ատենագրութիւնները քննելով ստուգելը դիւրին է : Միւս կողմէ ալ նախաքննութեան երթալէ կզգուշանայ , ամբաստանողի կերպարանը վրան շառնելու համար :

Պէկեան էֆէնտի այսօր ալ ուրիշ ծանր և պատասխանատուութիւն հրաւիրող վիճակի մը մէջ կը գնէ զինքը յայտարարելով թէ

Ժողովին որոշման չպիտի հնարանդի : Արդէն Մասնաժողովին շնորհայանաւ աղկ ի նշանակութիւն մը շատաւ և իրեն ձեռքը փաստ չունենալը նշուակեց : Եթէ Ժողովն այսօր որոշէ թէ Մասնաժողովն պիտի երթայ և ուրիշ չեք թայ, իր դատադարձութիւնը իր ձեռքը կը բռնէ պիտի բռնայ : Եթէ Պէկեան էֆէնտի ընկեր թէ Ժողովին որոշման մէջ չընդտայ որ Նախաքննիչ Յանձնախումբն իմ թղթերս ալ պիտի ուղչէ, ուստի չդաշի սահայն եթէ Ժողովն այսօր որոշէ, պատրաստ եմ զանոնք տանիլ Յանձնախումբին, այս իստքը կրնար նշանակութիւն մ'ունենալ : Չեմ կարծեր որ իր ամենակարեւոր օտքիւմաններն Յանձնախումբին շնորհակցելու համար շուրջեր երթալ անոր և կուզէ որ Ժողովն կարգայ : Եթէ այս է պատճառը, կհարցնեմ իրեն, միթէ հոս Ժողովն առջև կարգալէ ետև պիտի չյանձնէ՞ նայն թղթերը Ժողովին. թող պատասխանէ :

Պէկեան Թ. Է. — (Պատասխանելով Այս պիտի յանձնեմ, բայց փախերացեալ պատճէններն ինձ արտելու պայմանաւ :

ՓԱՓՈՉԻԱՆ Ս. Է. — Կտեսնե՞ք տեսքը, որ Պէկեան էֆէնտի շնորհակցելու իր ամենակարեւոր թղթերը նայն իսկ այս Ազգային ժողովին տաննադարին, որ Ժողովին բոլոր թղթերն իր քով պահելու վտանգութիւնը կը կրէ և որ քիչ մ'առաջ զինք կարչապանէր : Պէկեան էֆէնտի այս յայտարարութիւնն ալ նկատողութեան արժանի է :

ԱՏԵՆԱՊԵՏ Է. — Ո՛չ, ևս Պէկեան էֆէնտին չեմ պաշտպաներ, այլ արդարութիւնը :

ԱՐԲԱՆՆԻ ՆԱԽԱԳԱՆՆԻ — Ես կ'օրհնուիմ որ Պէկեան էֆէնտի հիմա կարգայ այն թղթերը, բայց մէջոք տեսնեմ թէ իմ ըստարարութիւնս կ'ընդունի մի :

ԱՏԵՆԱՊԵՏ Է. — Արբաղան Հայր. իր-

րև Նախագահ իրաւունք ունիք հրաման բռնելու որ կարգացուն Պէկեան էֆէնտի թղթերը : Չեք հրամանը յարկելով հանդերձ կհամարձակիմ դիմել տալ որ Ժողովն ալ իրաւունք ունի սոց մասին իր ազատութիւնը պահպանել :

ԱՐԲԱՆՆԻ ՆԱԽԱԳԱՆՆԻ — Եթէ հիմա չկարգայ և իմ դաւաճանն ու խարերսց ըլլալ չհաստատէ . . .

ՉԱՅՆԵՐ. — Արբաղան Հայր, Չեզի համար չեն սոց բառերը :

ԱՏԵՆԱՊԵՏ Է. — Ես կապահովեմ Ձեր Արբաղանութիւնը յանուն ժողովայ թէ երբէք Պէկեան էֆէնտի դաւաճանն բառն արտասանած չէ Ձեր անձին համար, ինչպէս որ ամենագրութեան մասին իր ըրած սրբագրութիւններէն ալ հասկցուեցաւ : Եթէ այդ պիտի բառ մը բերնէ՞ սպրդած ալ է, քանի որ ինք չէ կըսէ, չըսած պէտք է համարինք :

Պէկեան Թ. Է. — Ո՛չ, ըսած չեմ :

ԱՐԲԱՆՆԻ ՆԱԽԱԳԱՆՆԻ — Թէ որ ինձ համար ըսուած չէ դաւաճան բառը, թող կարգայ և տեսնենք թէ որո՞ւ համար է : Պէկեան էֆէնտին յայտարարեց քիչ մ'առաջ թէ Ազգային շահուց և քաղաքականութեան դէմ բան մը չկայ իր ըսելիքներուն մէջ : Ես զինքը պատուաւոր անձ մը ճանչցած եմ ցարդ, և այն վիճակն որուն մէջ կը տնտիս այսօր, մինչև հիմա չէի տեսած իր վրայ, կը հաւատամ երբ կըսէ թէ ազգային շահուց և քաղաքականութեան դէմ դարձելու բան մը չկայ իր կարգալիք թղթոց մէջ : ուստի Ժողովն կ'ընդունի որ թոյլ տայ իր թղթերը կարգալու :

(Ա. Է. — Է.)

ԱՏԵՆԱՊԵՏ Է. — Ժողովն իր ձեռքն ունի, իր դործոց ընթացքը դիւրեւու համար

Կանոնադրութիւնը միջոցներ ցուցած է իրեն. Մասնաժողովին երթալ ըսելը Ժողովայ մէջ չը կարգացուն ըսել չէ : շատ անգամ դ'անփակ նիստ կարճանջեն այս տեսակ փոփոխ խնդիրները : Կանոնադրան ձեռք պահպանելու համար Ժողովին պիտի հարցնեմ թէ Պէկեան էֆէնտի թղթերը հո՞ս չէն Յանձնաժողովին մէջ կարգացուն, այսօր չենք ուրիշ որ :

ՄԵՐԵԼԻՍ — ԳՈՒԼԻ Թ. Է. — Ես արդէն խօսք ուղած եմ, և հիմայ ալ ճիշդ այդ կէտին վրայ խօսք ունիմ :

Որ և իցէ պարագայի մէջ Ազգային ժողովոյ արժանապատուութեան կէտը մեր նըկատողութեանն պէտք չէ վերաբեցնել : Երբ Ժողովն արժանապատուութիւնն ոտքի տակ երթայ, ազդին շահերն ալ ի հիմանէ կը վտանգին : ուստի այս կէտին միշտ նախանձախնդիր ըլլալու ենք, եթէ ազդին շահերը պաշտպանելու սրտան և պարտականութիւնն իսկ հանձնալք :

Քիչ մ'առաջ այնպիսի տաղնապ մը յարուցին, որ ամեն բան չփոխեցաւ : միտքերը պաշարելու շարժ յառաջ դաշին այնչափ որ Արբաղան Պատրիարքն իսկ յուզուեցաւ : Թէ և նոյն չփոթութեան մէջ՝ ըստ իս մեզողորհի ալ չէր որ Արբաղան Հօր դիւրադամութիւնը վերաւորէր, քանի որ ինչպիսի Նորին Արբաղանութեան անձին վրայ կը դառնար : Եւ այս պատճառաւ էր անուշտ որ հրամայեց Պէկեան էֆէնտի յատուկ աստ կարգալ իր թղթերը : Ես Պէկեան էֆէնտին իւր թղթերը հոս կարգալուն կամ չկարգալուն վրայ չպիտի խօսիմ : այլ պիտի խօսիմ այն պատճառարանութիւններն հերքելու համար, զորս Պէկեան էֆէնտի մէջ բերուա իր թղթերը Յանձնախումբին շնորհայալընէն սրբարացնելու դիմամբ :

Պէկեան էֆէնտի ըսաւ թէ՛ իր թղթերը Յանձնախումբին ներկայացնելու զինքն հրաւիրելը և այժմէն հոս կարգալ չտալը իր երեսփոխանական համարառութեան իրաւունքին դէմ է : և մինչև իսկ այս պարագային մէջ Ազգային ժողովոյ համարառու-

թեան սկզբունքին նկատմամբ վտանգ նըմարեց և անոր վրայ ուղարկութիւն հրաւիրեց :

Եթէ Պէկեան էֆէնտի այս ձեռն տակ խօսելով մեր մտքերը նախապաշարել չէր ուզեր, զո՞նէ կուզէր իր երեսփոխանական իրաւունքն ապօրէն բացառութեամբ այնչափ ընդարձակել, որ մինչև իսկ կարելի ըլլար ազատ համարիլ զինքն Ժողովս ընտրուեալ Յանձնախումբին շնորհայանալու և իր թղթերն անոր շտանելու :

Ազգային ժողովը երբ որ ուզէ կարող է որևէ խնդրոյ համար Յանձնախումբը կարգել և անոր յանձնել նոյն իսկ իր ամենէն մեծ մէկ իրաւունքն : միթէ՞ ասով իւր համարառութեան իրաւունքն հրաժարած կըլլայ : շատ անհեթեթ կարծիք է այս : Ո՛վ կը հաւատայ թէ այդպիսի Յանձնախումբ մը երթալն երեսփոխանի մը համարառութեան իրաւունքը կ'ուսաղեցնէ : Արդի պարագային մէջ՝ երեսփոխանական համարառութեան սկզբունքին նկատմամբ Պէկեան էֆէնտի երեսկայան վտանգը խանգարեալ դատողութեան արդիւնք է : Բայց երբ Ժողովս՝ Հայկական խնդրոյն նկատմամբ երևան եկած փաստանութիւնները ըննելու և հետազոտելու պաշտօնով Յանձնախումբ մը կարգած է, եթէ այն ճանրակիս ամբաստանութեանց ապացուցման համար խոտացեալ վտերադրերը Յանձնախումբին չընկերայացնելու դիմումով յառաջ բերուած բարութանաց ահանջ դնէ, և իւր Յանձնախումբին հրաւիրին շարքուելուն անտարբեր մնայ, իր կարգած մարմինն ինք անարգած պիտի ըլլայ և հետևարար իւր արժանապատուութիւնը ոտքի տակ տուած : Ար անհեթ որ եթէ իրական վնաս մը կայ, Պէկեան էֆէնտի պաշտպանած դրութեան մէջ է, թէ որ Ժողովս թոյլտուութիւն ընէ անոր իւր թղթերն Յանձնախումբին շտանելու : Այսօրն զի այն աստն սպարդիւն գործ կըլլայ այլ ևս Ժողովոյ կողմէ Յանձնախումբը կարգել որ և է խնդրոյ համար : Եւ արդարև ո՞ր քննութիւն անձն է, որ այնուհետև երբ

զինքն Յանձնատիրի մը անգամ ընտրենք, սիրտի հաճի ընդունիլ զայն, տեսնելով որ Ժողովն իր ընտրած անձին արժանապատուութիւնը չստացուանէր:

Պէկեան Էֆէնտի իր թղթերը հոս կարողաւ հաւանութիւն գտնելու համար կրնէր թէ Ազգային շահուց և քաղաքականութեան գաղտը բան մը չկայ անոնց մէջ: Կարի հետաքրքրական է գիտնալ թէ՞ Պէկեան էֆէնտի իւր թղթերն ամբողջ սիրտի ներկայացնէ Ժողովոյն, թէ անոնց մէկ մասը:

Պէկեան Թ. Էֆ.— (ԸՊՊՊՊՊ) Այո՛, այո՛ ամենքն ալ սիրտի կարգամ հոս:

ՄԷՐԵԼԻՄ—ԳՈՒԼԻՅ Էֆ.— (ԸՊՊՊՊՊ) Հետաքրքրական է կրտեմ, վասն զի զեռ ամենուս ականջին ալ կը հնչէ՛ այս խնդիրն յարուցանելու համար՝ դորձածած խոշոր բաները և բանեցուցած լեզուն, որոց ողին զիւրաւ չհամարձայնիր իւր այս յայտարարութեան հետ: Բայց սահ մը ենթադրենք թէ իւր խօսքերն ու թղթերը ազգ. շահուց և քաղաքականութեան գաղտը բան մը չեն պարունակէր, ինչո՞ւ ուրեմն կվարանի Յանձնատիրին երթալու և իւր թղթերն անոր, ներկայացնելու. միթէ՞ կը վախնայ որ իւր վաւերագրերն կկորսուին . . .

Պէկեան Թ. Էֆ.— (ԸՊՊՊՊՊ) Այո՛, երբեմն կորսուածները կան:

ՄԷՐԵԼԻՄ—ԳՈՒԼԻՅ Էֆ.— (ԸՊՊՊՊՊ) Անոր պատճառանք է այդ՛. յայտնի կերեւի որ Պէկեան Էֆէնտի ոչ համոզկեր պատճառ մը ունի, և ոչ ալ իրաւունք իր թղթերը Յայնձնատիրին շտանելու, քանի որ զանոնք ամբողջապէս հոս ներկայացնելու պատրաստ լինել կը յայտարարէ:

Բայց զարմանալի պէտք չէ թուի իւր այս արարքը, մինչդեռ վերջին աստիճանի կըրտած և յուզուած է, այնչափ յուզուած, որ մինչև իսկ քիչ մ'առաջ զիս սիրտի մեռցնէք կը սուտար: Չեմ հասկնար թէ ի՞նչ զի-

տում ունէր ասոր տակ, ո՞վ սիրտի ուզէ Պէկեան Էֆէնտի մեռնիլը, և ի՞նչու համար: Ես իմ մասիս ո՛չ այդ սիրտի փափաք մ'ունիմ և ոչ ալ պատճառ. և տարակոյս՝ չունիմ որ իմ պաշտօնակիցներէս և ոչ մէկուն մարջն այդ սիրտի բան մը կանցնի: Եւ ո՞վ ինչ ըրած ունի իրեն . . .

Պէկեան Թ. Էֆ.— (ԸՊՊՊՊՊ) Գեռ ի՞նչ սիրտի ընէք, դուրս սիրտի երթամ, չեմ կըրնար կոր երթալ:

(ԸՊՊՊՊՊ ձգտելով)

ԱՏԵՆԱՊԵՏ Էֆ.— Կաղաչեմ ատենաբան Էֆէնտին որ անոնց միջանկեալ խօսքերուն պատասխանելու իր խօսքը շարունակէ:

ՄԷՐԵԼԻՄ—ԳՈՒԼԻՅ Էֆ.— (ԸՊՊՊՊՊ) Ապահով եղի՛ք, Ատենապետ Էֆէնտի, ես Պէկեան Էֆէնտի ընդ միջման չսիրտի պատասխանեմ: Պէկեան Էֆէնտի ըսաւ, Ժողովը խընդաց, և հաշիւը գոցուեցաւ. արդէն պատասխան տալու հարկ չմնաց ինծի: Ես իմ խօսքիս թելը ձեռք սիրտի առնում:

Վհասկցուի աւա՛սիկ որ Պէկեան Էֆէնտի ներկայ խնդրոյն մէջ կամ ի սկզբանէ ի վեր մասնաւոր զխտումով մը կհարժի, և կամ եթէ անկեղծ է, իւր խնդիրը ներկայացնելու ճամբան չդիտէր. եթէ անոնք օրէն հանդարտ կերպիւ ըսէր թէ՛ այնպիսի բաներ զիտեմ որ Հայկական խնդրոյն մէջ խարէութիւններ գործուած ըլլալու մասին ծանր կասկածներ կծնին, և ասոնց վերաբերեալ վաւերական գրութիւններ ունիմ, և զանոնք Ժողովին կուզեմ հաղորդել, չսիրտի գտնուէր երեսփոխան մը որ անտարբերութեամբ լէր զայս և անոր խօսքին կարեւորութիւն չտար, վասն զի անկեղծ մարդու մը դորձ կըլար այն: Բայց Պէկեան Էֆէնտի այնպիսի կըրտածներ դառն լեզու և հակասական ընթացք մ'ունեցաւ, որ իւր նպատակին վրայ տխուր գաղափար մը ներշնչեց ամենուս և կասկածե-

յու իրաւունք տուաւ: Մինչեւ իսկ երբ քիչ մ'առաջ կըսէր թէ՛ իւր ընկերք յայտարարութեանց մէջ ազգային շահուց և քաղաքականութեան հակասակ բան մը չկայ, ես չկրցայ հեռատալ իւր խօսքին. և ի՞նչպէ՞ս հաւատայի երբ ատենագրութեան մէջ իւր կրկին և կըրկին սրբագրած խօսքերն իսկ հակասութիւններով լեցուն են, դորս կարող եմ ցուցնել:

Վերջոպէս խնդիրը պարզելով և եզրակացնելով կըսեմ թէ՛ Պէկեան Էֆէնտի յարուցած խնդրոյն համար Ազգային Ժողովն յանձնատիր մը կարգած է, որ իր պատճառները կատարելու համար Արազան Պատրիարքին զիտեր և անկից քաղած տեղեկութեանց վրայ կասկածելու բան մը չգտնելով քննականարար Պէկեան Էֆէնտի վերադարձեր և անոր ունենալ յայտարարած թղթերը տեսնել ուզեր է, ինչպէ՛ս որ իւր պատճառը խղճի մտօք կատարել ուզող Յանձնատիր մ'ուրիշ կերպիւ չէր կրնար վարուիլ: Եւ զայս հասկնալ շատ զիւրին է: Յանձնատիրին ինչէ՛ն զիտնար որ Նորին Արազնութեան տուած տեղեկութիւնները ճիշդ՝ և ներկայացուցած գրութիւններն ամբողջ էին, որովս զի կատարելապէս լուսաւորուէր խընդրոյն վրայ: Այս նպատակին հասնելու համար, ի հարկէ Պէկեան Էֆէնտի թղթերը տեսնել պէտք էր, և թէ կային: Հետեւաբար Պէկեան Էֆէնտի օրինաւոր պատճառ մը չէր կրնար ունենալ ասոր ընդ զիտնալու, ուստի և իր անհրաժեշտ պարտաւորութիւնն էր. և է, իր թղթերը տանիլ Յանձնատիրին: Պէկեան Էֆէնտի այս օրինակն ճամբէն խոյս տալու ի՞նչ իրաւունք կրնայ ունենալ և որմէ՞ կրնայ ասնուլ այդ սիրտի իրաւունք մը: Եթէ իւր թղթերն այս ատենին մէջ կարողաւ տեսնէն է որ զինքը կտանջէ, ո՞վ ըսաւ իրեն թէ նոյն թղթերը Յանձնատիրին տանելն ետեւ հոս չսիրտի կարողացուին: Անկեղծ և ազգասէր երեսփոխանը պէտք է օրինաւորութեան համակերպի և բացառիկ սլայմաններ պահանջելով անոնց վրայ չպնդէ ասօքինի:

Հիմա խնդիրն այսպէս պարզուելէ, և

Պէկեան Էֆէնտի անարկութեանց անհիմն ու անտեղի ըլլալը լաւ մը հասկցուելէ և յուզումն հանդարտելէ ետեւ, Արազան Նպատակահարմար Նպոյն՝ եթէ ուզէ՛ կրնայ իւր հրամանը կրկնել Պէկեան Էֆէնտի թղթերն հոս կարողաւ համար, և Ժողովն ալ թերեւս կհամակերպի Նորին Արազնութեան կամայքը:

Տ. ՄԱՏԹԻՆՍ ԵՊՍ.— Ուշ հասոց դժբաղդարար և չկրցի իմանալ կարողացուած տեղեկագրին եզրակացութիւնը. թէ և պատրաստ եմ Պէկեան Էֆէնտի պատճառարանութեանց մասին խօսիլ՝ լրացողաց մէջ կարողացած ըլլալով իր առ Յանձնատիր մը ուղղած պատասխանագիրը:

(Այս փոքին որունն ըստ ինքորդ որեւէ Սեփուրէն վերջին Գրքոյ յայնչափ քիչ քիչ էր)

Ինձ կթուի թէ յանձնատիրին իր տեղեկագիրը թերի բերած է. վասն զի իր պատճառն բնութենէն էր նաև Պէկեան Էֆէնտին լսել և անոր թղթերը տեսնել:

Այսպիսի ծանրակշիւ խնդրոյ մը մէջ երբ Ազգային Ժողովը կուզէ ամեն բան իմանալ, Արազան Պատրիարքը չվարանեցաւ իր քով եղած բոլոր գրութիւններն որ այս խընդրոյն կվերաբերին, ցուցնել Յանձնատիրին: Նորին Արազնութիւնը կյայտարարէր ասկէ յառաջ թէ Հայկական խնդրոյն մէջ ազգին շահուցը համեմատ վարուած է և զինքը պատասխանատու կցուցնէր:

Մեր դրած յանձնատիրը կրնար արդեօք միայն Ս. Պատրիարքը լսելով բաւականաւ և կատարեալ տեղեկութիւն բերել մեզ անոնց անոր դէմ խօսողն ալ լսելու: Երբէք այն կարծիքն չեմ թէ Պէկեան Էֆէնտի թղթերը խնդրոյ նիւթ չսիրտի ըլլան. թերեւս այնպիսի թղթեր են իր ձեռքն եղաններն՝ որ Ժողովն ուզէ չուզէ սիրտի պարտաւորի ուղարկութեան ենթարկել: Միթէ յանձնատիրին անոր թղթերը կարողալէ ետեւ եթէ ուզէ խնդրոյն ուրիշ գոյն մը տալ, ո՛չ

սպարէն Պէկեան Էֆէնտի ազատ է փաստա-  
փանել և խնդիրն ուղղել:

Խնդիրն այս տեսակէտով մեկնուելէ ետև  
պէտք չէ տարակուսիլ թէ Ժողովը չուզէր  
տեսնել և լսել Պէկեան Էֆէնտի թղթերը .  
ոչ, անպատճառ կուզենք տեսնել և պիտի  
տեսնենք, սակայն օրէնքով մը: Արդարև  
նշանակութիւն մը ունի երբ Պատրիարք մը  
կըսէ թէ՛ եթէ ամեն բան ըսեմ պէտք չէ  
պաշտօնիս վրայ մնամ, Ժողովը յանձնախումբ  
կը ցուցնէ իրեն որ ամեն բան անոր ըսէ, և ե-  
րեսօխիսան մը չուզէր իր թղթերն այդ Յանձ-  
նախումբին տանիլ: Միթէ օրէնքը բացառու-  
թիւն կընդունի՞, եթէ այսօր Պէկեան Էֆէն-  
տի համար բացառութիւն ըլլայ. վաղն ալ ես  
կազանջեմ:

(Ընդ-ձեռն-ձեռն)

Օրէնքը կազանջէ որ Յանձնախումբը  
Պէկեան Էֆէնտին ալ լսէ, վասն զի միայն մէկ  
կողմը լսելով չկրնար ըլլալ: Ժողովին կ'մնայ  
վճուել, հա՞րկ է թէ ոչ Պէկեան Էֆէնտին  
երթալ ցոյց տալ իր թղթերը Յանձնախումբին:

Շնորհ կը խնդրեմ Ս. Պատրիարքէն՝ որ  
ինք ալ համակերպի ժողովին որոշման, եթէ  
անոր արդիւնքն ըլլայ Պէկեան Էֆէնտի թղ-  
թերը Յանձնախումբին տանիլ:

(Անհամբերութեան ցոյցեր և ասէ ուղղ յայնք)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Ըստ որում քուէ ու-  
ղղներ շատ են, նախ վիճարանութեան փա-  
կումը քուէի պիտի դնեմ:

Անմիջապէս վիճարանութեան փակումը  
քուէի դրուելով, Յ քուէի դէմ մեծամաս-  
նութեամբ ընդ-ստ-ստ ժողովէն:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Յանձնախումբին տեղե-  
կագիրը լսեցիք. Յանձնախումբը կըսէ թէ  
Արքայան Հայրը մտիկ ընելէ ետև Պէկեան  
Էֆէնտի թղթերն ալ ուղեր է տեսնել,  
բայց զլացուեր է իրեն: Փափաղեան և Մէ-


րեէմ—Գուրի Էֆէնտիներն ու Մատթէոս  
Արքայան հետզհետէ ատենախօսելով կար-  
ծեք յայտնեցին թէ պէտք է Յանձնախումբը  
տեսնէ նաև Պէկեան Էֆէնտի թղթերը  
և իր տեղեկագիրն ամբողջացնէ: Աստի այս  
կէտը քուէի պիտի դնեմ:

Հետեւապէս քուէի դրուելով թէ Պէկ-  
եան Էֆէնտի թղթերը Յանձնախումբին տանիլ  
հա՞րկ է թէ ոչ, Ժողովը՝ 12ի դէմ 21 քուէով  
ոչ-չէ թէ Պէկեան Էֆէնտի պարտաւոր է իր  
թղթերը տանիլ անմիջապէս Յանձնախումբին:  
Ընդդէմ քուէից կարդն էր նաև Արքայան  
Նախագահի քուէն ալ:

Պէկեան Էֆէնտի բողոքեց այս որոշման  
դէմ ըսելով թէ երեսօխիսանական իրաւանց  
հակառակ է. և իր բողոքն արձանագրել  
խնդրեց:

Ատենապետ Էֆէնտի՝ Ժողովին որոշման  
վճուական ըլլալը յայտարարելով, ատենը  
փակեց ժամ 40 ին:

Ատենագիր                      Բ. Ատենապետ  
Մ. Յ. Մէլիքեան                Տէր-Ս. Երանցեան



ԳԻՆ 2 ԴՐՈՒՇ

ՄԵՓՀԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԿԵԳՐՈՆԱԿԱՆ ՅՆՏՈՒԿԻՆ

ԼԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՑ ԾԱԽՈՒՅ ԹԱՏԻՇՆԵՆԱԼ

Կը ծախուի ի Դիւանատան Պատրիարքարանի, և Ղալաթիոյ  
Ս. Լուսաւորիչ Եկեղեցւոյ բանկայր և Հայ գրապահատան քով